Յետոյ նա սկսում էր երկար ու երկար բացատրել ինձ, թէ ի՞նչ բան է ճշմարիտ ուսումը, բայց ես այն ժամանակ չէի հասկանում, միայն զարմանում էի, թէ ինչպէ՛ս այդ կոշտ, կոպիտ մարդը, որ անդադար գազանների հետ պատերազմելով, գազանի բնաւորութիւն էր ստացել, — այնքան լաւ, այնքան հիմնաւոր կերպով խօսում էր ուսման վրա...

Որսորդը շատ մօտ բարեկամ էր իմ քեռիներից մէկի հետ, որին կոչում էին Մինաս. դա բոլորովին ձրի շինում էր, նորոգում էր որսորդի զէնքերը, երբ նրանց որեւիցէ մասը խանգարուած էր լինում: Այդ Մինասի հետ խօսել էր որսորդը, համոզել էր նրան, որ ինձ վեր առնեն իրանց արհեստանոցը որպէս աշակերտ: Ես սիրում էի այդ արհեստը, իմ սիրտը դողդողում էր ուրախութիւնից, երբ քեռիներիս արհեստանոցն էի մտնում, եւ ամբողջ ժամեր նստած այնտեղ, խորին հոգեզմայլութեամբ նայում էի գեղեցիկ, փայլուն զէնքերին, որ դուրս էին գալիս քեռիներիս ճարտար ձեռքից: Բայց մայրս սատանայի նման հակառակ եղաւ եւ չթողեց, որ ես այդ արհեստը սովորէի: Նա ատելով քեռիներիս, ատում էր եւ նրանց արհեստը: Նա կրկնում էր միեւնոյն խօսքերը, որ ես շատ անգամ լսել էի վարժապետիցս, թէ բոլոր զինագործները մեղաւոր մարդիկ են, բոլորն էլ դժոխքը կը գնան:

— Ինչո՞ւ, — մի անգամ հարցրի ես:

— Նրա համար որ, թուր, սուր, հրացաններ են պատրաստում, եւ այդ զէնքերով մարդիկ միմեանց կոտորում են, — պատասխանեց նա:

Թէ այսպէս, թէ այնպէս, քեռիներիս արհեստանոցը մտնելը ինձ չյաջողեցաւ. ես դարձեալ մնացի այն «դժոխքի» մէջ, որպէս կոչում էր նրան որսորդը:

Բայց նոյն «դժոխքիէ մէջ ես ունէի մի մխիթարիչ հրեշտակ, որ թեթեւացնում էր իմ կրած վշտերի դառնութիւնը: Դա Սոնան էր – վարժապետիս աղջիկը: Թէ ի՞նչ զգացմունք էր այն, որ կապել էր իմ սիրտը այդ նազելի արարածի հետ, — ճշմարիտ, ես էլ չգիտէի եւ մինչեւ այսօր չեմ կարողացել հասկանալ:

Սոնան ինձ շատ էր օգնում, առաւել այն աշխատութիւնների մէջ, որ ես պէտք է կատարէի վարժապետիս տնտեսութեան մէջ: Երբ միասին գնում էինք այգին կովերի համար խոտ քաղելու, նա ասում էր ինձ.

— Ֆարհատ, դու նստիր, դասդ սերտիր, ես կը քաղեմ խոտը:

— Դու մենակ չես կարող բոլորը քաղել, դու կը յոգնես, — ասում էի նրան: